

## Կարեն Չայրապետյան

### 1918 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՄԻՕՐՅԱ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Հայաստանի Հանրապետություն, գաղթականություն, արևմտահայ փախստականներ, գաղթականական պետական քաղաքականություն, վիճակագրություն, մարդահամար**

Հայաստանի Հանրապետությունում (1918–1920թթ.) հանրապետական և տարածքային կառավարման պետական մարմինները իրենց վիճակագրական ստորաբաժանումների, դրանց բացակայության դեպքում համապատասխան մասնագետ-վիճակագիրների միջոցով անցկացրել են գաղթականության, այդ թվում արևմտահայ փախստականների հաշվեգրումներ, ցուցակագրություններ ու հաշվառումներ: Նմանօրինակ աշխատանքներ իրականացրել են նաև տարածքային և քաղաքային ինքնավարությունները: Հայաստանի Հանրապետության գոյության կարճատև ժամանակաշրջանում իրականացվել են նաև ազգաբնակչության և գաղթականության վիճակագրական տվյալների համապետական հավաքագրումներ՝ 1918 թ. մարդահամար, 1919 թ. գյուղատնտեսական հաշվեգրում:

1918 թ. հոկտեմբերի 1-ի մի օրյա մարդահամարը համապետական վիճակագրական ձեռնարկումներից առաջինն է: 1918 թ. մի օրյա մարդահամարի շրջանակներում իրականացվել է նաև գաղթականության հաշվեգրում<sup>1</sup>: Հայաստանի Հանրապետությանը վերաբերող պատմագիտական և ժողովրդագրական աշխատություններում տեղ են գտել այս կամ այն սկզբնաղբյուրից վերցված արևմտահայ ու արևելահայ փախստականների և ընդհանուր գաղթականներին վերաբերող տարաբնույթ թվային տվյալներ<sup>2</sup>: Նման իրավիճակում ավելի քան անհասկանալի է

<sup>1</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ., նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, էջ 60:

<sup>2</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967, հ. 7, էջ 60-61, Հայոց պատմություն, Երևան, Զանգակ-97, 2010, հ. 4, գիրք 1, էջ 61-65, Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, Տպարան Համազգային, 1968, էջ 169, Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան» հր., 1993, էջ. 199, 270-271, Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, հ. 1, էջ 50-51, 135, 146, 150, Հ. Մելիքսեթյան, Արևմտահայերի բռնազաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915–1940 թ.թ.), Երևան, «ԵՊՀ հր.», 1975, էջ. 57, 58, Նույնի՝ Հայրենիք – սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թ.թ.), Երևան, «ԵՊՀ հր.», 1985, էջ 42, Ա. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917-1921), Երևան, «Հայաստան» հր., 1958, էջ 86, 112, 115, Նույնի՝ Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921 թ.թ.), Երևան, 1966, էջ. 88, 89, Ծ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, էջ 195, Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հր., 1999, էջ 61, Ա. Հակոբյան, Հայաստանի խորհրդարանը

այն հանգամանքը, որ 1918 թ. մի օրյա մարդահամարը մեր պատմագիտության կողմից չի արժանացել որևիցե ուշադրության, փաստորեն անտեսվել է: Մեր ուսումնասիրության նպատակն է լույս սփռել 1918 թ. միօրյա մարդահամարի՝ որպես ներքաղաքական կարևոր միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված մի քանի հանգամանքների վրա:

1918 թ. օգոստոսի 3-ի Հայաստանի Խորհրդի նիստում Հայաստանի Հանրապետության նորակազմ կառավարության ծրագրային հայտարարության մեջ ՀՀ առաջին վարչապետ Զ. Քաջազունին երկրում տիրող «կատաստրոֆային» վիճակը ծանրացնող, անիշխանության հանգեցնող իրողությունների շարքում նշել է նաև հանրապետությունում «հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ» փախստականներին<sup>1</sup>: Բաթումի պայմանագրով նորաստեղծ Հայաստանի Հանրապետության տարածքը կազմել է «հազիվ 9-ը»<sup>2</sup>, կամ «մոտավորապես 12 հազար քառակուսի կիլոմետր»<sup>3</sup>: 1918 թ. հոկտեմբերի 1-ի մի օրյա մարդահամարի պաշտոնական ամփոփ տվյալների համաձայն հանրապետությունում փախստականների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 330 հազար մարդ<sup>4</sup>, այսինքն մոտ մեկ միլիոնանոց ազգաբնակչության<sup>5</sup> շուրջ մեկ երրորդը: Այդ էր պատճառը, որ ժամանակակիցները նորանկախ Հայաստանի առաջին հանրապետությունը մնանացրել են գաղթականական կայանի հետ<sup>6</sup>:

Մեծաթիվ արևմտահայ և արևելահայ փախստականների սոցիալ-տնտեսական ծանրագույն վիճակով էր պայմանավորված այն հանգամանքը, որ գաղթականության հարցում պետական քաղաքականության ձևակերպումը նորանկախ հանրապետության իշխանությունների կողմից իրականացվել է իրենց գործունեության հենց սկզբից: ՀՀ կառավարության վերը նշված ծրագրային հայտարարությունում

---

և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թ.թ.), Երևան, Հրատարակություն ՀՀ դաշնակցության, 2005, էջ. 146, 147, Ս. Ավետիսյան, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2009, էջ 16, Է. Դանիելյան, Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում (1914-1922 թթ.) (Շարժը, կացությունը, թվակազմը), ատենախոսություն, Երևան, 1997, էջ. 82, 85, 102, Զ. Ջատիկյան, Հայաստանի Հանրապետության ներքին դրությունը 1918-1920 թթ., (պետական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի հիմնահարցերը), ատենախոսություն, Երևան, 1996, էջ. 64, 65, 99, 145-146, Պ. Աբեղյան, Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում (1 հունվարի 1914 թ. – 1 հունվարի 1930 թ.), Երևան, 1930, էջ 62, Գ. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը (Տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 1975, էջ 33, Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, Երևան, 2001, էջ. 135-136, 138:

<sup>1</sup> Տե՛ս «Ձանգ», 7 օգոստոսի, 1918: «Հորիզոն», 15 օգոստոսի, 1918, նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920, Երևան, 2000, էջ 58, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 11:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 86:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 164:

<sup>4</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ., նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 60:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 164:

<sup>6</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. 7, էջ 144, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 199:

ներքաղաքական անհետաձգելի խնդիրների հետ մատնանշվել է նաև գաղթականության հիմնախնդիրը և վերջինիս լուծման ուղղությամբ պետական քաղաքականությունը՝ «տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրանց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում»<sup>1</sup>: Այստեղ նաև ամրագրվել է գաղթականության հիմնախնդրի հետ անմիջական կապ ունեցող պարենավորման խնդիրը՝ «եռանդուն միջոցների դիմել կարելվույն չափ մեղմացնելու պարենավորման տազնապը»<sup>2</sup>: Գաղթականական պետական քաղաքականությունը կյանքի կոչելու, սոցիալական ծանր պայմաններում գտնվող «հարյուր հազարավոր» անօթևան և անօթի փախստականների կարիքները որոշ չափով հոգալու համար առաջնահերթ զգացվել է համապետական համապատասխան ծրագրեր մշակելու անհրաժեշտությունը: Այդ ծրագրերն անհրատեսական և անհրակամանալի կլինեին, եթե դրանց հիմքում ընկած չլինեին գաղթականների արժանահավատ վիճակագրական տվյալներ:

Միաժամանակ ՀՀ կառավարության ծրագրային հայտարարության արտաքին քաղաքականության բաժնում ՀՀ կառավարությունը կարևոր խնդիր է դրել. «լուծել օսմանյան զորքերը մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը»<sup>3</sup>: Պատահական չէ, որ այդ երկու օրախնդիր հարցերը կառավարության ծրագրային հայտարարության մեջ ներկայացված են միասին: «Կատաստրոֆային» պայմաններում գտնվող փոքրածավալ հանրապետության իշխանությունները անհետաձգելի լուծումներ պահանջող գաղթականների ապահովության ու խնամատարության խնդիրների տարբերակ են տեսել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմաններից թուրքական զորքերի դուրս բերումը և հայրենի բնակավայրեր արևելահայ փախստականների վերադարձի ապահովումը: Արտաքին քաղաքական կարևոր այլ խնդիրների հետ հայրենի օջախներ փախստականների վերադարձը դիվանագիտության առաջնակարգ լուծումներ պահանջող օրակարգային հարց էր<sup>4</sup>: Իհարկե, դիվանագիտական գործընթացներում գաղթականության վերադարձի խնդրի արժանությունը առավել հստակ է եղել այն պարագայում, երբ ամրագրվել է վիաճակագրական արժանահավատ թվային տվյալներով, երբ դրանք ստացվել են մարդահամարի արդյունքում:

Հատկանշական է, որ վիճակագրական տվյալների հավաքագրման անհրաժեշտությունը և նշանակությունը գիտակցել և կարևորել են հանրապետության գործադիր իշխանության ինչպես վերին, այնպես էլ ստորին մարմիններում: Այսպես, էջմիածին քաղաքի և շրջանի գաղթականական գործերի կառավարիչը՝ գաղթականական

<sup>1</sup> Տե՛ս «Ձանգ», 7 օգոստոսի, 1918, «Հորիզոն», 15 օգոստոսի, 1918, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920, էջ 58, Հայաստանի Հանրապետության պառլամենտի միստերի արժանագրություններ 1918-1920 թթ., էջ 11:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս , 1918-1920 ., , 2012, . 46-47.

հարցերով զբաղվող խնամատարության նախարարի տեղակալին ուղղված գրությունում հիմնավորելով «մշտական վիճակագրող» ունենալու անհրաժեշտությունը՝ մատնանշել է, որ «վիճակագրությունը ամեն մի գործի հայելին է, ճիշտ այնպես, ինչպես վաճառականի համար հաշվապահությունը, ...գործի մասին ճիշտ գաղափար կազմելու, նրան կանոնավոր և անհրաժեշտ ընթացք տալու և ղեկավարելու համար էական նշանակություն ունի վիճակագրությունը»<sup>1</sup>: Իսկ գյուղատնտեսության և պետական գույքերի նախարարության «Գյուղատնտեսական հանդես» գիտահանրամատչելի պարբերականը «Քրոնիկոն» բաժնում նախարարության երկրագործական բաժանմունքի կենտրոնական վիճակագրական բյուրոյի ստեղծումը հիմնավորվել է նրանով, «որ Հայաստանի տնտեսական կյանքի վերականգնման ծանր ու դժվարին գործը աւելի արդյունավոր կերպով ու լայն չափերով հնարավոր կլինի այն դեպքում միայն, եթե ծրագրելիք ու ձեռնարկելիք միջոցների ժամանակ հնարավոր լինի առաջնորդել վիճակագրական ճշգրիտ թւական տւեալներով<sup>2</sup>: Գյուղատնտեսության և պետական գույքերի վարչության երկրագործական բաժանմունքի կենտրոնական վիճակագրական բյուրոյի կողմից գավառական վիճակագրողների համար պատրաստված հրահանգներում նշվել է. «Չկայ մի երկիր, որ այնպիսի հրամայական պահանջ ունենայ իր տւած գոհերի, կրած աւերումների, քայքայւած տնտեսութեան, սովալլուկ ազգաբնակութեան բազմաթիւ և բազմազան կարիքների չափն ու ծաւալը կոնկրետ տւեալներով պարզելու և որոշելու համար, որքան Հայաստանն ունի: Եւ չկայ մի պետութիւն, որ այն աստիճան կենսապէս շահագրգռւած և հարկադրւած լինի ծաւալելու իր ոյժերի մաքսիմումը շինարար և ստեղծագործական աշխատանքի վրայ, ինչպիսին Հայկական Հանրապետութիւնն է: Բնական է, որ այդպիսի պայմաններում մեր երկրի տւեալ արժէքների և կարիքների բազմակողմանի վիճակագրութիւնը ստանում է առաջնակարգ նշանակություն»<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետությունում գիտական հիմունքներով վիճակագրության անհրաժեշտության, պետության և վիճակագրության փոխհարաբերություններին, դրանց միջև «ամուր կապին», պետական գործերում գիտական վիճակագրության դերին ու նշանակությանը, վերջինիս կազմակերպական ձևերին է նվիրվել հանրապետության վիճակագրական կենտրոնական ծառայության ղեկավար, ճանաչված գիտնական-վիճակագիր Բ. Իշխանյանը «Պետությունը և ստատիստիկան (իմա՝ վիճակագրություն – Կ. Հ.)» հոդվածը<sup>4</sup>: «Պետութիւնը մատակարարում է ստատիստիկային նիւթերի ու փաստերի առատ պաշար, թւական տւեալների անվերջ շարքեր, հարթում է նրա համար լայն հորիզոններ ընդգրկելու և մութ խորշեր ու անկյիւններ թափանցելու հնարավորութեան ուղիներ: Իսկ ստատիստիկան՝ գիտական վերլուծութեան առարկայ դարձնելով իրեն տրամադրված նիւթերն ու փաստերը, լոյս է սփռում

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-205, ց. 1, գ. 535, թ. 128:

<sup>2</sup> Տե՛ս «Գյուղատնտեսական հանդես», Երևան, Տպ. «Կուլտուրա», 1920, N 1, էջ. 83:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 99, թ. 135:

<sup>4</sup> Տե՛ս «Գյուղատնտեսական հանդես», 1920, N 1, էջ 32-33:

պետական կեանքի բոլոր կողմերի և երևույթների վրայ, ցուցադրում է պլիսն ու մինուսը, առաջադիմութեան և յետամնացութեան աստիճանները պետական կեանքի ու գործունեութեան այս կամ ճիւղում կամ սահմանում», - նշել է Բ. Իշխանյանը<sup>1</sup>: Հեղինակը հողվածը ամփոփել է հետևյալ կարևոր եզրահանգումով. «Պետական ստատիստիկան և ստատիստիկական գիտութիւնը իրար լրացնում և ամբողջացնում են»<sup>2</sup>:

Ժամանակի գիտական հիմունքներով հավաքագրված վիճակագրական տվյալները և հատկապես մարդահամարի իրագործման հանգամանքը թե՛ երկրի ներսում և թե՛ նրա սահմաններից դուրս մեծապես բարձրացրել է պետության և իշխանությունների քաղաքական դերն ու նշանակությունը, ինչպես նաև խթանել առաջադիմական և ժողովրդավարական պետության կերպարի ձևավորումը: Այդ կարծիքին էր Բ. Իշխանյանը, որը վերը նշված հողվածում գրել է. «Մասնագետները ... վաղուց են նկատել այն հանգամանքը, որ պետական իշխանութիւնները կազմակերպելով վիճակագրական նիւթերի հաւագրումների գործը, ի նկատի ունի ամենից առաջ իր սեփական պահանջներն ու նպատակներն և շատ յաճախ առաջնորդում է այդ պահանջների նեղ հասկացողութեամբ, որից, ի՛ հարկէ, անխուսափելիօրէն տուժում է ստատիստիկական ամեն մի ձեռնարկութիւն: Սակայն շնորհիւ այն հանգամանքի, որ քանի գնում, այնքան աւելի և աւելի է բարձրանում երկրների կուլտուրական զարգացման մակարդակը, և միւս կողմից, աւելի և աւելի է դեմօկրատականանում պետութիւնը՝ իր ողջ կառուցւածքով և ըմբռնումներով, ազատագրւելով հին պրիմիտու հասկացողութիւններից, նոյն չափով վերանում և կորցնում է իր նշանակութիւնը վերոյիշեալ վտանգը»<sup>3</sup>:

Վիճակագրության նկատմամբ վերը նշված վերաբերմունքի արգասիքն է այն իրողությունը, որ հանրապետական կառավարման մի քանի մարմիններ՝ ներքին գործերի, խնամատարության, պարենավորման նախարարությունները, գյուղատնտեսության և պետական գույքերի վարչությունը, որը հետագայում վերակազմավորվեց նախարարության, գործունեության հենց սկզբից ձեռնամուխ են եղել իրենց կառուցվածքում համապատասխան վիճակագրական ստորաբաժանում ստեղծելուն և աշխատանքների կազմակերպմանը: Պետական շինարարության տրամաբանությունը այնուհետև պետք է հանգեցնէր հանրապետությունում վիճակագրական գործի զարգացմանն ուղղված հաջորդ քայլին՝ կենտրոնական միասնական վիճակագրական ծառայության ստեղծմանը: Այդ մարմնի ձևավորման գործընթացի կարևոր փուլ էր 1919թ. փետրվարի կեսերին քննարկման դրված ժամանակավոր վիճակագրական բյուրոյի կազմակերպման հարցը<sup>4</sup>: Սակայն 1919 թ. փետրվարի 18-ի ՀՀ կառավարության նիստում որոշվել է միայն պարենավորման, խնամատարության

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 35:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 40:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-205, ց. 1, գ. 524, ք. 219:

և ներքին գործերի նախարարությունների ներկայացուցիչներից ձևավորել միջգերատեսչական խորհրդակցություն<sup>1</sup>:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև ոչ պակաս կարևոր մեկ այլ հանգամանքի: Կովկասահայ հանրության, նրա հասարակական-քաղաքական ղեկավար շրջանակների, հետագայում Հայաստանի Հանրապետության գլուխ անցած գործիչների շրջանում վիճակագրության մշակույթը բավականին տարածված և արմատավորված է եղել: Այն ձևավորվել է դեռևս Առաջին աշխարհամարտի սկզբներին, երբ փախստականների առաջին խմբերը հասել են Այսրկովկաս: Վիճակագրական տվյալների առաջին հավաքագրումները իրականացվել են 1914 թ. վերջերին և 1915 թ. սկզբներին: Նմանօրինակ վիճակագրական տվյալներ՝ իրենց համապատասխան պարզաբանումներով և վերլուծություններով, հայ հանրությանը ներկայացվել են ինչպես մամուլի էջերում<sup>2</sup>, այնպես էլ առանձին հրապարակումների միջոցով<sup>3</sup>:

Այդ ժամանակաշրջանում գաղթականական վիճակագրական տվյալների հավաքագրումը հիմնականում իրականացնվել է գաղթականության գործերով զբաղվող բարեգործական և հասարակական կազմակերպությունների ու միությունների կողմից՝ համապատասխան մասնագետ-վիճակագիրների միջոցով: Վիճակագրական տվյալներն այդ կազմակերպություններին հարկավոր են եղել ինչպես իրենց գործունեությունն արդյունավետ կազմակերպելու, այնպես էլ հասարակությանը և առանձին բարերարներին գաղթականական գործի կազմակերպման վերաբերյալ լիարժեք ու հիմնավորված հաշվետվություններ ներկայացնելու համար: Այսպես, օրինակ, գաղթականական օգնության գործով զբաղվող Երևանի «Եղբայրական օգնության» հանձնաժողովի և Համառուսական զենստվոյական միության լիազորի հանձնարարությամբ ու ֆինանսավորմամբ Երևանի վիճակագրական հանձնաժողովի կողմից 1915 թ. հունվարի 30-ին իրականացվել է «Տաճկաստանից ու Պարսկաստանից եկած գաղթականների և ռուսահպատակ փախստականների (հայ, ասորի, հույն և այլն) միօրյա վճակագրական տվյալների հավաքագրումը և մշակում<sup>4</sup>:

1916 թ. հունիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի 30-ը ռուսական իշխանությունների կողմից Կովկասում անցկացված Համառուսաստանյան գյուղատնտեսական հաշվեգրումը գաղթականական վիճակագրական տվյալների առումով մեզ համար կարևոր նշանակություն չունի, քանի որ մի քանի թերությունների հետ մեկտեղ այն չէր անդրադարձել բնակչության ազգային կազմին<sup>5</sup>: Հայաստանի ազգաբնակչության

<sup>1</sup> Տե՛ս ԶԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 43, թ. 28, նաև Հայաստանի Հանրապետության կառավարության միստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2014, էջ 114:

<sup>2</sup> Տե՛ս «Հորիզոն», 6 դեկտեմբերի, 1914, Թիֆլիս, N 273, նույնը՝ 10 դեկտեմբերի, 1914, N 276, 21 փետրվարի, 1915, N 40, 1915, N 61-ի հավելված:

<sup>3</sup> Տե՛ս Միօրյա վիճակագրություն Տաճկաստանից ու Պարսկաստանից եկած գաղթականների Ռուսահպատակ փախստականների (հայ, ասորի, հույն և այլն) 1914-15 թ., Երևան, Տպարան «Լույս», 1915:

<sup>4</sup> Տե՛ս նույնը:

<sup>5</sup> Տե՛ս Արևելյան Հայաստանը 1916-1917 թթ. մարդահամարներում, Երևան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1992, էջ 4:

ազգային կազմի, այդ թվում նաև գաղթականության թվային տվյալների հետ կապված խնդիրների համար առանձնապես կարևոր կարող են լինել 1917թ. կեսերին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հողագործության միմիստրության կողմից անցկացված գյուղատնտեսական հաշվեգրման նյութերը, որոնք «մանրամասն տվյալներ են հաղորդում գյուղական բնակավայրերի, բնակչության, նրա սեռային ու ազգային կազմի, ծխերի, գաղթականության, արտադրության միջոցների, վարձակալական հարաբերությունների, հողատարածությունների, հուային սեփականության ու հուօգտագործման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ»<sup>1</sup>: Այդ վիճակագրության նյութերը, ցավոք, մինչև օրս գիտականորեն չեն ամփոփվել ու մշակվել<sup>2</sup>:

Այսպիսով, մինչև 1918 թ. միօրյա մարդահամարի իրագործումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների ձեռքի տակ են եղել 1917 թ. կեսերին Ռուսաստանի ժամանակավոր կառավարության հողագործության միմիստրության գյուղատնտեսական վիճակագրության որոշ թվային տվյալները: Սակայն նրանք չէին կարող անտեսել այն հանգամանքը, որ «1917 թ.ին կատարած Անդրկովկասեան գիւղատնտեսական վիճակագրութիւնը, շնորհիվ մեր երկրի ապրած մի շարք քաղաքական, հասարակական ու տնտեսական կատաստրոֆիկ երևոյթների, ինչպէս տաճիկների արշաւանքը, գաղթականութիւնները, սովն ու համաճարակները և այլն, միանգամայն հիմնովին փոխելով մեր երկրի տնտեսական և ազգագրական կառուցւածքը, մեզ համար կորցրել էր իր գործնական նշանակութիւնը»<sup>3</sup>: Այդուհանդերձ, 1919-1920 թթ. ՀՀ կառավարության և համապատասխան նախարարությունների կողմից անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը Թիֆլիսից Երևան տեղափոխելու և մշակելու համար<sup>4</sup>: Հայաստանին վերաբերող վիճակագրական նյութերի նկատմամբ այդպիսի գործելաոճը կարելի է բացատրել պետական անվտանգության տեսակետից արդարացված հանրապետության իշխանությունների այն դիրքորոշումով, որ պետությանը վերաբերող յուրաքանչյուր վիճակագրական նյութ պետք է լինի հանրապետության իշխանությունների իրավասության ներքո, համապատասխան վիճակագրական մարմնի ձեռքի տակ:

Մինչև 1918 թ. մի օրյա մարդահամարի ամփոփ թվային տվյալների ստացումը հանրապետության իշխանությունները օգտագործել են հանրապետական ու տարածքային կառավարման տարբեր մարմիններից, ինքնավարություններից, գաղթականական, հայրենակցական և այլ կազմակերպություններից ու առանձին անհատներից ստացված գաղթականության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Ամենայն հավանականությամբ տեղական մարմիններից ստացված վիճակագրական

<sup>1</sup> Տե՛ս «Լրաբեր հասարական գիտությունների», Հրապարակումներ, Վ. Ղազախեցյան, 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության մասին, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, № 7 (547), էջ 79:

<sup>2</sup> Տե՛ս Արևելյան Հայաստանը 1916-1917 թթ. մարդահամարներում, էջ 77:

<sup>3</sup> Տե՛ս «Գյուղատնտեսական հանդես», Երևան, Տպ. «Կուլտուրա», 1920, N 1, էջ. 83:

<sup>4</sup> Տե՛ս «Լրաբեր հասարական գիտությունների», Հրապարակումներ, Վ. Ղազախեցյան, 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության մասին, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, № 7 (547), էջ. 79-83:

տեղեկատվության հիման վրա է ձևավորվել գաղթականության թվային այն տվյալները, որոնք 1918 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի Խորհրդի նիստում գաղթականական հարցի քննարկման ժամանակ հրապարակվեցին գաղթականական հանձնաժողովի անդամ պատգամավոր Մ. Տեր-Մինասյանի (Ռուբենի) կողմից: Մ. Տեր-Մինասյանը իր զեկուցման մեջ հայտնում էր, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս սահմաններում, որը ընդգրկել է չորս գավառամասեր, որտեղ կային 524 հազար բնակչությամբ 522 գյուղ, «գաղթականության թիվը 300 հազարից ավելի է: Սրանից (գաղթականների տեղավորումից – Կ.Հայրապետյան) հետո մնացել է ավելի քան 200 հազար: Մնացածների մի մասը հեռացել է մեր երկրից, մյուս մասը՝ մեռել»<sup>1</sup>: 1920թ. հոկտեմբերի վերջին և նոյեմբերի սկզբին «Ժողովուրդ» թերթում հրապարակված «Վիճակագրական աշխարհից» վերնագիրը կրող հոդվածաշարում Հայաստանի Խորհրդի նախկին անդամ Թ. Ավդալբեկյանը իրավացիորեն գրում էր, որ Մ. Տեր-Մինասյանի ներկայացված գաղթականների թվային տվյալները հիմնված են եղել «մանրամասն ու ամենահավանական հաշիվներու վրա»<sup>2</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ գաղթականների նմանօրինակ իրատեսական թվային տվյալների հետ մեկտեղ հանրապետության հանրությանը պաշտոնապես ներկայացվել են նաև փախստականների միանգամայն այլ չափաքանակի տվյալներ՝ առանձին դեպքերում գաղթականների թվաքանակը հասցնելով մինչև 3 միլիոնի<sup>3</sup>: Վերջինիս հետ կապված Թ. Ավդալբեկյանը ներկայացրել է Հայաստանի Խորհրդում քննարկումների ժամանակ տեղի ունեցած զավեշտալի մի դրվագ. «1918 թվի աշնանը, երբ Հայաստանի Խորհրդի գաղթականական և պարենավորման հանձնաժողովները քննում էին ազգաբնակչության խնամատարության ու պարենի մատակարարման հարցերը, կարիք զգացվեց պարզելու Հայաստանի Հանրապետության այն ժամանակվա սահմաններում, այն է Բաթումի դաշնագրի որոշած հայկական հողամասում գտնվող գաղթականների թիվը: Խնդրի քննության ժամանակ հարցրին այն օրերում պարենավորման միևնույն օգնական, հետո տխուր համբավ հանած Հովի. Նիկողայոսյանի կարծիքը: Հիշյալ բարձր պաշտոնյան մեծ ինքնավստահությամբ հայտարարեց, որ Հայաստանի սահմաններում մոտ ... երեք միլիոն գաղթական կա: Հանձնաժողովի անդամների ծաղրական բացականչությունները սառը ջուր լցրին պաշտոնյայի վիճակագրական հմտության վրա, որից հետո նա համաձայնեց այս թիվն իջեցնել երկու միլիոնի: Նոր հակաճառություններն հարկադրեցին պարոն օգնականին նվազեցնելու գաղթականների թիվը մինչև մեկ ու կես կամ մեկ միլիոն, որից ցած իջնելու չհոժարեց նա, այնուհետև, ոչ մի կերպ»<sup>4</sup>:

1918թ. աշնանը Հայաստանի Խորհրդում խնամատարության նախարար Ա. Խատիսյանը իր զեկուցումներում ներկայացնում էր Հայաստանի Հանրապետության

---

<sup>1</sup> Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 32:

<sup>2</sup> Տես «Ժողովուրդ», 29 հոկտեմբերի, 1920:

<sup>3</sup> Տես նույն տեղում:

<sup>4</sup> Տես նույն տեղում:



այդ ժամանակվա սահմաններում մեկ միլիոն գաղթականների թվաքանակ<sup>1</sup>: 1919 թ. հունվարի 1-ի «ժողովուրդ» թերթը արձանագրել է, որ խնամատարության նախարար Ա. Խատիսյանը 1918 թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի Խորհրդին զեկուցել է, որ մինչև դեկտեմբերի 4-ը մոտավորապես 386 հազար արևելահայ և 200 հազար արևմտահայ փախստականներ գտնվում էին Երևանի, Էջմիածնի, Ախտալի, Դիլիջանի, Նոր Բայազետի շրջաններում, ինչպես նաև Վրաստանում, Ռուսաստանում և այլ վայրերում<sup>2</sup>: Իսկ նույն այդ նիստի վերաբերյալ «Ձանգ» թերթի հաղորդագրությունում արձանագրվել է 600 հազար գաղթականություն<sup>3</sup>: Մինչ այդ ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանը, ինչպես նշում էր Թ. Ավդալբեկյանը, գաղթականների «թիվն երբեմն հայտարարում էր 900 ու երբեմն էլ 600 հազար»<sup>4</sup>: Ակնհայտ է, որ այդ թվային տվյալները վերաբերել են ոչ միայն այդ ժամանակվա Հայաստանի սահմաններում, այլ ամբողջ Կովկասում ապաստանած փախստականներին: Գաղթականության թվային տվյալների հետ կապված մնաց խառնիխառ դիժակով է պայմանավորված եղել նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության նորակազմ կառավարությունը Երևանում իր աշխատանքների կազմակերպման արդեն իսկ առաջին ամսում՝ 1918 թ. օգոստոսին, պարտադրված է եղել ձեռնարկելու մարդահամարի գործը<sup>5</sup>:

Վերը բերված հանգամանքներից, ինչպես նաև գաղթականական գործը ծրագրավորելու և կազմակերպելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը նախաձեռնել է ցուցակագրել գաղթականներին: «Պետք է գաղթականների ցուցակագրություն լիներ, բարվոք համարվեց (ազգաբնակչությանը – Կ. Հայրապետյան) ամբողջովին ցուցակագրել», – Հայաստանի Խորհրդում տվյալ հարցի վերաբերյալ պարզաբանում է ներկայացրել ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանը<sup>6</sup>: 1918 թ. օգոստոսի 23-ին կառավարությունը լսելով Հայաստանի Հանրապետությունում մի օրյա մարդահամար կազմակերպելու վերաբերյալ ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի զեկուցումը, որոշել է 90 հազար ռուբլի հատկացնել նախարարությանը՝ Հայաստանի այն ժամանակվա սահմաններում մարդահամար անցկացնելու համար<sup>7</sup>:

Հայաստանի Հանրապետության տարածքում 1918 թ. հոկտեմբերի 1-ին կատարվելիք մի օրյա մարդահամարի մասին սեպտեմբերի 21-ին հայտարարությամբ

---

<sup>1</sup> Տես նույն տեղում:

<sup>2</sup> Տես «ժողովուրդ», 1 հունվարի, 1919:

<sup>3</sup> Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 115:

<sup>4</sup> Տես «ժողովուրդ», 29 հոկտեմբերի, 1920:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 13, թ. 20, նաև Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 16:

<sup>6</sup> Տես Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 32:

<sup>7</sup> Տես ՀԱԱ, ֆ. Պ-202, ց. 1, գ. 13, թ. 20; նաև Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 16:

հանդես է եկել ներքին գործերի նախարարության գաղթականների տեղավորման և պարենավորման բաժանմունքի ընդհանուր կառավարիչ Վ. Քրմոյանը: Հայտարարությունում պահանջվել է «բոլոր հաստատություններից և հասարակական կազմակերպություններից՝ աջակցել ցուցակագրողներին մարդահամարը անթերի կատարելու համար»<sup>1</sup>: Այդ պահանջը առաջին հերթին վերաբերել է տարածքային կառավարման մարմիններին և ինքնքնավարություններին, ինչպես նաև գաղթականական հասարակական կազմակերպություններին և հայրենակցական միություններին: Միաժամանակ «հանրապետության քաղաքացիներից» պահանջվել է «մարդահամարի վերաբերմամբ պատրաստված հարցերին տալ ստույգ պատասխաններ»<sup>2</sup>: Վերջին պահանջը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակով, որում հայտնվել են հանրապետության բնակչությունը և առաջին հերթին փախստականները: «Հայաստանի գյուղատնտեսական վիճակագրություն. 1919 թիվ» աշխատության ներածությունում Բ. Իշխանյանը խոսելով վիճակագրության գործում տեղ գտած դժվարությունների մասին իրավացիորեն նշել է, որ «ստատիստիկայի համար մեծ նշանակություն ունեցող թվական ճշգրիտ մանրամասնություններ անկարելի է իմանալ և ձեռք բերել այնտեղ, ուր տնտեսական զարհուրելի ավերումների, գաղթի, մասայական սովամահության և համաճարակ հիվանդությունների ճիրաններում հյուծված ու տառապած ազգաբնակչության ծայր աստիճան տնանկությունն ու չքավորությունն էր վիճակագրում: Հարկ է զգացվել հատուկ հրահանգների ու մեծ ջանքերի գործադրության՝ գյուղացիությունից ճշմարտություն և ճշմարտության մոտիկ տեղեկություններ քաղելու համար»<sup>3</sup>: «Պետք է ասել, որ ոչ մի չափազանցություն չկա այստեղ, ես էլ եմ ապրել այդ օրերին Հայաստանում և գիտեմ դառն իրականությունը»,– հաստատելով Բ. Իշխանյանի վկայությունը, ավելացնում էր ժողովրդագիր Զ. Կորկոտյանը<sup>4</sup>: Ակներև է, որ նմանօրինակ դժվարություններ միանշանակ առկա են եղել նաև 1918թ. իրականացված մարդահամարի ժամանակ:

1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի մասին հայտարարությունը անմիջապես իր արձագանքն է գտել Հայաստանի Խորհրդում: Հայաստանի Խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 28-ի նիստի վերջում սոցիալիստ-հեղափոխականները դիմել են ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանին հարցումով, «թե ով է նշանակել ոմն Քրմոյանի՝ մարդահամար կազմակերպելու»<sup>5</sup>: Հարցմանը Ա. Մանուկյանը անմիջապես պատասխանել է, որ «Քրմոյանին նշանակել եմ ես, նա իմ պաշտոնյան է, մարդահամարը որոշել է մինիստրությունը»<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 2, գ. 596, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Զ. Կորկոտյան, ճերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, Պետական հրատարակչություն, 1929, էջ 8:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 56:

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում:

Միօրյա մարդահամարի համար պատրաստված համապատասխան վիճակագրական տետրերը մարդահամար իրագործող ցուցակագիրների կողմից առանձին բնակավայրերում լրացվել և ուղարկվել են Երևան: 1919 թ. մարտին խնամատարության նախարարության վիճակագրական բաժանմունքի գրողներում առկա էին միօրյա մարդահամարի 1276 վիճակագրական տետրեր<sup>1</sup>: Արևմտահայ գործիչ Ա. Դրամբյանի վկայությամբ Երևանում 30 աշխատակիցներից կազմվել է առանձին մի աշխատանքային խումբ, որը մեկուկես ամսվա ընթացքում ցուցակագիրների կողմից հավաքագրված նյութերը ամբողջությամբ վերամշակել է<sup>2</sup>: Արդյունքում «աշխատանքները լրիվ կատարված են եղել և ավարտված, հանված ընդհանուր ամփոփումները թե՛ տեղացիների, թե՛ գաղթականության, նախ ըստ վարչական բաժանման գավառների, նահանգների և ապա ամբողջ Հայաստանի տերիտորիայի»<sup>3</sup>: Ա. Դրամբյանը հավաստիացրել է, «որ հոկտեմբերի 1-ի վիճակագրությունը հանձնված է եղել իր ժամանակին խնամատարության մինիստրին<sup>4</sup> նրա անձնական քարտուղարի միջոցով»<sup>5</sup>: 1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի հետ կապված աշխատանքների ավարտը արձանագրվել է նաև ՀՀ կառավարության կողմից: Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 20-ի նիստում որոշվել է «հոկտեմբերի 1-ի համաժողովրդական վիճակագրության նյութերի մշակման և տպագրության համար» դիմել Հայաստանի Խորհուրդ՝ ներքին գործերի նախարարին 40.000 ռուբլու վարկ տրամադրելու մասին օրինագծով<sup>6</sup>: Անցկացված մի օրյա մարդահամարի ծախսերի համար Հայաստանի պետական գանձարանին ներկայացվել է 90 հազար ռուբլու պահանջագիր<sup>7</sup>:

1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարի ամփոփ արդյունքները համապատասխան թվային տվյալների ու աղյուսակների տեսքով և անհրաժեշտ պարզաբանումներով, հանրապետության իշխանությունների կողմից այդպես էլ չեն դրվել շրջանառության մեջ<sup>8</sup>: Միայն հանրագումարի բերված գաղթականների թվաքանակը՝ որպես պաշտոնական վիճակագրական տվյալ, հրապարակավ ներկայացվել է հանրապետության հանրությանը՝ Հայաստանի Խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 11-ի նիստում: Այստեղ գաղթականության օգնության նախահաշվի մասին զեկուցման ժամանակ պառլամենտական գաղթականական հանձնաժողովի անդամ, պատգամավոր Ս. Տեր-Մարտիրոսյանը հայտնել է, «որ համաձայն վերջին մարդահամարի,

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-205, ց. 1, գ. 539, թ. 15:

<sup>2</sup> Տե՛ս «ժողովուրդ», 2 նոյեմբերի, 1920:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Ա. Դրամբյանի հիշատակված ժամանակահատվածում խնամատարության նախարարն էր Ա. Խատիսյանը:

<sup>5</sup> Տե՛ս «ժողովուրդ», 2 նոյեմբերի, 1920:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-199, ց. 1, գ. 11, թ. 12, նաև Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920թթ., էջ 56:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-201, ց. 1, գ. 38, մաս 2, թ. 322:

<sup>8</sup> Տե՛ս Կ. Հայրապետյան, 1919 թ. հունվար-փետրվարին փախստականների թվային տվյալների աճի մասին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 52-53:

ռուսահայ գաղթականների ընդհանուր թիվը հասել է 180.000-ի, թուրքահայ գաղթականությանը՝ 150.000-ի, ընդամենը 330.000 հոգի»<sup>1</sup>:

1918 թ. միօրյա մարդահամարի արդյունքում ստացված ազգաբնակչության և գաղթականության վիճակագրական տվյալները անհրաժեշտ են եղել երկրի տնտեսական կյանքի վերականգնման գործը ավելի արդյունավետ կազմակերպելու, ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում պետական կարևոր նշանակություն ունեցող աշխատանքները իրագործելու համար: Գաղթականության խնդիրներին այս կամ այն չափով լուծումներ տալու համար մշակվել և կառավարության ու խորհրդարանի հաստատման են ներկայացվել փախստականներին լքված բնակավայրերում տեղավորելու, այդ բնակավայրերի հողատարածքներում և արհեստանոցներում նրանց աշխատանքով ապահովելու, անգործունակ գաղթականների խնամատարությունը կազմակերպելու միջոցառումներ և ծրագրեր՝ իրենց համապատասխան նախահաշիվներով: Գաղթականական պետական ծրագրեր մշակելն ու իրագործելը անհնար է եղել առանց իրատեսական ու արժանահավատ վիճակագրության<sup>2</sup>: Հանրապետության իշխանությունների գաղթականական քաղաքականությունը և դրանից բխող ծրագրերը, նախահաշիվները օրենսդրորեն ձևակերպվել է 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին<sup>3</sup>: Այդ ծրագրերի հիմքում ընկած են եղել 1918 թ. միօրյա մարդահամարի վիճակագրական տվյալները:

1918 թ. միօրյա մարդահամարի միջոցով ձեռք բերված տվյալները անհրաժեշտ են եղել հանրապետության ներքաղաքական կյանքի մի քանի այլ բնագավարներում: Այսպես օրինակ, գաղթականների թվային տվյալները, որպես կանոն, օգտագործվել են հանրապետությունում պառլամենտական և տեղական ինքնակառավարման մարմինների բազմաթիվ ընտրությունների կազմակերպման ժամանակ, ինչպես նաև առողջապահության համակարգում բժշկասանիտարական գործը (օրինակ՝ 1918 թ. խոլերայի համաճարակի դեմ պայքարը) կազմակերպելու ընթացքում: Ակներև է, որ մարդահամարը, ունենալով սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն, հանդիսացել է նշանակալից ներքաղաքական իրադարձություն: 1918 թ. միօրյա մարդահամարի իրականացումը ցույց է տվել, որ նորաստեղծ Հայաստանի Հարապետությունը կազմակերպչական և գիտական առումներով բավականին կարողունակ պետություն է եղել:

Այսպիսով, 1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարը Հայաստանի Հանրապետության գոյության կարճատև ժամանակաշրջանում իրականացված համապետական վիճակագրական առաջին ձեռնարկումն է: Միօրյա մարդահամարի իրագործումը պայմանավորված է եղել ներքին և արտաքին քաղաքական հանգամանքներով: Հանրապետության իշխանությունները գիտակցելով գաղթականական պետական

<sup>1</sup> Տե՛ս «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ.: նույնը՝ Հայաստանի Հանրապետության պառլամենտի միստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 60:

<sup>2</sup> Տե՛ս «Ժողովուրդ», 29 հոկտեմբերի, 1920:

<sup>3</sup> Տե՛ս Կ. Հայրապետյան, Փախստականների նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպումը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, ՀՀ ԳԱԱ, 2004, № 1 (165):

քաղաքականության մշակման և իրագործման համար նորացված, իրատեսական վիճակագրության կարևորությունը՝ կազմակերպել են 1918 թ. միօրյա մարդահամարը: Ինչպես երկրի ներքաղաքական կյանքում, այնպես էլ արտաքին քաղաքական առումով 1918 թ. միօրյա մարդահամարը հանդիսացել է կարևոր և նշանակալից միջոցառում: Մարդահամարը եղել է այն իրողության արտահայտությունը, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը որակյալ մարդկային ներուժ և որոշակի մշակութային զարգացածության մակարդակ ունեցող պետություն է և կարողունակ է իրագործել կազմակերպչական այնպիսի բարդ ձեռնարկում, ինչպիսին մարդահամարն է:

**Կարեն Հայրապետյան, 1918 թ. հոկտեմբերի 1-ի միօրյա մարդահամարը Հայաստանի Հանրապետությունում** – 1918 թ. հոկտեմբերի 1-ին միօրյա մարդահամար է իրականացվել Հայաստանի Հանրապետությունում: Այն համապետական վիճակագրական առաջին ձեռնարկումն էր: Միօրյա մարդահամարի իրագործումը պայմանավորված էր մի քանի ներքին և արտաքին քաղաքական հանգամանքներով: Մարդահամարի հիմնական նպատակը գաղթականների վերաբերյալ նորացված և իրատեսական վիճակագրական տվյալների ստեղծումն էր: Միօրյա մարդահամարը պետության ներքին և արտաքին քաղաքական կյանքում կարևոր և նշանակալից իրադարձություն էր: Այն ապացուցել է, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը որակյալ մարդկային ներուժ ունեցող պետություն է՝ կարողունակ իրագործելու կազմակերպչական առումով այնպիսի բարդ ձեռնարկում, ինչպիսին մարդահամարն է:

**Карен Айрапетян, Однодневная перепись населения 1-го октября 1918 года в Республике Армения** – (1918-1920 .) 1- 1918

1918

1918

1918

**Karen Hayrapetyan, «One day census» of 1 October 1918 in Republic of Armenia** – On 1 October 1918 «One day census» was conducted in Republic of Armenia. It was the first state statistical activity. «One day census» realization was conditioned by several internal and external political factors. The main goal of the census was to create updated and realistic statistics about refugees. «One day census» was an important and significant event in the internal and external political life of the state. It proves that the newly created Republic of Armenia was a state of high-quality human potential that was able to realize such a difficult organizational activity as a census.

*Կարեն Հայրապետյան – պատմական գիտ. թեկնածու, դոցենտ*

